

ջայ Սարֆրազն էր, որու մասին հոս մասնաւոր պիտի խօսիմ :

Իսկ վերը յիշուած Հ. Ալիշանի աւանդութենէն զատ, Բրիտանական թանգարանի թիւ 8 ձեռագրին յիշատակարանէն զիտենք, որ Խօջա Նազար ունեցած պիտի ըլլայ աղջիկներ ալ :

Խօջայ Նազարի շինարարութեան կը վերադրուի Սպահանի Նոր Զուղայի Սուրբ Գէորգ եկեղեցին, սակայն առանց որոշ ապացոյցի : Տէր Յովհաննէանց կը գրէ .

«Այս եկեղեցի թէպէտ չունի յիշատակ շինողին իւրոյ՝ այլ ի հին ձեռագիրս կոչի այն եկեղեցի Խօջայ Նազարի եւ այժմ իսկ հասարակօրէն մեծ Խօջայ անուն կարգային» :

Եւ, արդարեւ, իմ այցելութեանս, 1937-ին, ինծի ալ պակսեցան եկեղեցւոյն շինութեան վերաբերող յիշատակարաններ : Նոյնիսկ ես չհանդիպեցայ հին ձեռագրաց յիշատակարաններու, որոնց մէջ, ըստ Տէր Յովհաննէանցի հաւատման, այդ եկեղեցին Խօջայ Նազարի եկեղեցի կը կոչուէր :

Ուրեմն, առ այժմ կարելի չէ պնդել մէկ կամ միւս հաւանականութեան վրայ . եկեղեցին կրնայ կառուցուած ըլլալ Խօջայ Նազարէ, եւ կամ թէ առ նուազն Խօջայ Նազար եւ իր գերդաստանը կրնան նախընտրած ըլլալ այդ եկեղեցին : Այս վերջին պարագային համար 1937-ին, իմ հոն գտած մէկ խաչքարը կրնայ համոզիչ ըլլալ : Այս խաչքարը կը գտնուի խորանին տակի չորս պատուանդաններէն մէկուն վրայ :

Խ(ա)ՉԱ Յ(ի)Շ(ատա)Կ է
Խ(օ)Ձէ Ն(ա)Ձ(ա)Ր(ի)Ն

Եկեղեցոյն այս խորանն ունի չորս պատուանդաններ եւ իւրաքանչիւր պատուանդան չորս երեսներ ու իւրաքանչիւր երեսի վրայ առանձին յիշատակարան : Ինչպէս ըսի, այդ պատուանդաններէն մէկուն մէկ երեսին վրայ էր վերը արուած Խօջայ Նազարի յիշատակարանը : Պատուանդանին միւս երեսներուն վրայ փոխադրուած է .

Խ(ա)ՉԱ Յ(ի)Շ(ա)Տ(ա)Կ է
ՍՈՒԼԹԱՆ Փ
ԱՇԷ

Սուլթանփաշէ կինն էր Խօջայ Նազարի եղբոր՝ Խօջայ Սաֆարին :

Նոյն պատուանդանին երրորդ երեսին վերայ կայ հետեւեալը .—

Խ(ա)ՉԱ Յ(ի)Շ(ա)Տ(ա)Կ է
ՄԱՐԻՍԱՄԻՆ

Ինչպէս ըսի, Խօջայ Նազարի կնոջ անունը Խաթուն Զան էր : Ես կը միտիմ խորհելու, որ այս յիշատակարանին Մարիամը ըլլայ իր մօր անունը : Պատուանդանին չորրորդ երեսի յիշատակարանը չլրացայ կարգալ, որովհետեւ խորանին այս մասը ծածկուած էր տախտակէ որմով մը, որ խորանը կը շրջապատէր : Գուցէ այդ յիշատակարանն ըլլայ Խօջայ Նազարի եղբոր՝ Խօջայ Սաֆարի յիշատակարանը, որուն կողակցի յիշատակարանը, ինչպէս ըսինք, կայ :

Միւս երկու պատուանդաններուն յիշատակարանները յանտարակոյս, կը վերաբերին եկեղեցւոյն շինութեան ժամանակակից ուրիշ Նոր Զուղայեցի մեծատուններու : Ասոնցմէ երկու հատը ունին նաեւ թուական :

Եռաջինը՝
Ս(ուր)Բ Խ(ա)ՉԱ ԲԱՐԵՆՍԱԻՍ է
ԱՌ Ք(րիստո)Ս ԽԱՆԲԷԿԷ
Թ(վ)ԻՆ ՌԿ(1611)
Երկրորդը՝
Ս(ուր)Բ Խ(ա)ՉԱ
ԲԱՐ(Ե)Խ(Օ)Ս
ԱՌ Ք(րիստո)Ս
ԽԱԻՁ(ա)Յ ՈՍԿԱՆ
ԻՆ ԹՎ(ԻՆ) ՌԿ(1611)

Ես ալ Տէր Յովհաննէանցի հետ կ'ընդունիմ, որ «Թուականք վերոգրեալ յիշատակարանաց յայտնի առնեն, թէ եկեղեցին այն շինեալ է ի 1060 (1611) թուականի, որ է մինն ի հնագոյն եկեղեցեաց Զուղայում**)

*) «Պատ. Նոր Զուղայում», Բ. հատոր, էջ 179 :

***) Անդ՝ էջ 180 : Ան կուտայ նաեւ պատուանդանի այս յիշատակարաններուն վեց հատը միայն եւ ոմանք քիչ ինչ խեղաթիւրեալ : Ես այս եկեղեցիէն արտադրեցի 50 յիշատակարաններ խաչքարերէ եւ արձանագրու-